ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ
ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԻՆ ՏՆԵՐԻ ՎՐԱՅ

Լ.Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Ինչպէս յայտնի է՝ Նոր Ջուղան հայկական այն հին գաղթօճախներից է, ուր փառաշէն ու գեղեցիկ եկեղեցիների կողքին կառուցուել են նաեւ մեծ ու փառաշէն տներ, ընդարձակ ու գեղատեսիլ եւ բաղկացած մի քանի մասերից՝ ինչպէս են մի շարք հին տներ։

Այս մասին որպէս առաջին վկայութիւն՝ տեղին է մի մէջբերում անել Շահ Աբբաս արքայի ինչ որ մի խնդրի առթիւ հայերի տուած մի հրամանագրից, ուր ասուած է, թէ «Ջուղայում տներ կային, որոնց կառուցման ծախսն եղել էր երկու հազար թուման. [հայերը] դրանք աւերեցին եւ իրենց գերդաստանն առած այտեղ եկան»[1]։

Շատ պարզ է, որ այդ օրերին, 1600ականներին, շատ մեծ գումար էր երկու հազար թումանը, եթէ նկատի ունենանք, որ, ըստ Նոր Ջուղայի պատմագրի, Երեւանի թաղի Սուրբ Ամենափրկիչ[2] եկեղեցու 1660ական թուերի կառուցման ծախսը եղել է 1086 ռիալ[3]՝ ի հարկէ բացի ժողովրդի գործաւորով բերած օգնութիւնը։ Ասենք նաեւ, որ 1910ական թուականներին Փերիայի հայաբնակ երեք մեծ գիւղերը՝ Բոլորանը, Խորգանը եւ Սանգիբարանը գնուել են 21000 թումանով։ Իսկ Ջուղայեցիները նման բարձրարժէք տներ կառուցել են նաեւ Նոր Ջուղայում։

Նոր Ջուղայում կառուցուած խոճայական այդ մեծ ու փառաւոր տներից դեռեւս կանգուն են մի քանիսը եւ վկան մեծ մասով աւերուած այդ ապարանանման տների։ Դրանից երեքում տեղաւորուել է արուեստագիտական Փարդիս համալսարանը. կան նաեւ մի քանի ուրիշները, եթէ ոչ ամբողջութեամբ՝ գոնէ որոշ մասերով, որոնց եւս վաճառումն ու ձեւափոխումն արգելուել են պետութեան կողմից, եւ այժմ աշխատանք է տարուում որ պահպանուեն։ Իսկ թէ քանի՞սն են աւերուել՝ դժուար է ճշգրտորէն ասել։ Նրանցից մի քանիսի քանդումին ականատես ենք եղել մենք, եւ նրանցից որոշ արձանագրութիւններ փրկելով՝ ցուցադրութեան ենք դրել վանքի թանգարանում։

Սովորաբար Նոր Ջուղայի տները կառուցուած են եղել երկու մասով՝ ամառնային եւ ձմեռնային, կամ հարաւային եւ հիւսիսային, այսինքն՝ ծմակկողմ եւ արեւահայեաց։ Ըստ մեծի մասի՝ ծմակկողմում ունեցել են գետնափոր, ուր պահուել են խմիչքները եւ ուտեստեղէնները. գետնափորերից ոմանք եղել են երկյարկ։ Եղել են նաեւ տներ, որոնք մօտիկ այգու եւ պարտէզի հետ ունեցել են նաեւ կանանց առանձին բաժին, ինչպէս եւ յատուկ մի մաս որպէս ախոռ՝ ձի եւ ջորի պահելու համար։

Նոր Ջուղայի հին տների մասին Արամ Երեմեանը եւ Յարութիւն Քիւրտեանը յօդուածներ ունեն Փարիզի Անահիտ եւ Պոսթոնի Հայրենիք ամսագրերում. սրանցից բացի՝ մի քանի տների նկարագրութիւնը բերուած է երկու գրքերում։ Առաջինը Ճան Քարզուէլի Նիու Ջուլֆա[4] խորագրով գիրքն է, ուր Նոր Ջուղայի եկեղեցիների հետ հեղինակը նկարագրել է նաեւ երկու հին տներ, իսկ միւսը Կարապետ Կարապետեանի Իսֆահան Նիու Ճուլֆա[5] խորագրուած եւ իտալերէն եւ անգլերէն երկլեզու գործն է։

Այս գրքերի առաջինում նկարագրուել են երկու տուն, իսկ երկրորդում՝ 13, իրենց յատակագիծերով եւ նկարներով։ Մենք եւս տասնեակ տարիներ առաջ զբաղուել ենք դրանցով եւ հաւաքել դրանց նկարները եւ տեղեկութիւններ դրանց մասին։ Իր ժամանակին սրանցից օգտուել է Կ. Կարապետեանը, բայց ժամանակի սղութեան եւ մեր խիստ զբաղուածութեան պատճառով մենք հնարաւորութիւն չենք ունեցել դրանք ամբողջացնելու եւ մամուլին յանձնելու, բացի մի քանի անգամ դրանք համառօտակի յիշատակելուց։

Ներկայիս ինչ որ կայ մեր ձեռքի տակ, թէկուզ ոչ լրիւ եւ ոչ ամբողջական, յանձնում ենք հայոց պատմութեան ուսանողների ուշադրութեան։

Միջանկեալ պէտք է յիշել, որ Փերիայի վրացարնակ Աֆուս գիւղում եւս եղել են, կամ թերեւս այժմ եւս կան հին տներ, որոնք կառուցուած են եղել Նոր Ջուղայի տների նման եւ ունեն ռուսի կոչուած գունաւոր ապակիներով դռներ ու պատուհաններ, որոնք բացուելիս՝ բարձրանում էին դէպի վեր։ Ոմանց առաստաղները ծածկուած էին տախտակներով, վրան՝ Աստուածածնի նկարը, Յիսուսը գրկին եւ հրեշտակներով շրջապատուած։ Կային նաեւ Իրանի թագաւորների եւ թագուհու նկարներ՝ որսի տեսարաններով։ Այս տներն ունէին զանազան զարդանախշեր եւ նկարազարդ գերաններ ու սիւներ։ Նրանցից մէկը 1963ին պատկանում էր Հասան Խանի որդի Ռեզուանիին։ Վստահաբար այս չէնքերը կառուցուել ու նկարազարդուել են վրացիների իսլամութիւնը ընդունելուց առաջ։

Ներկայիս Նոր Ջուղան ունի ութը թաղ՝ Մեծ Մէյտանը, Փոքր Մէյտանը, Զարսուն, Ղարագէլը, Յակոբճանը, Քարակոփների[6] թաղը, Դաւրէժը[7] եւ Երեւանը։ Այս թաղերից առաջին վեցը հիմնուել են հայերի գաղթի առաջին տարիներին, իսկ վերջին երկուսը՝ շուրջ յիսուն տարի յետոյ, 1655-

ական թուերին, երբ Շահ Աբբաս Երկրորդի հրահանգով, քաղաքամիջի հայերն եւս տեղափոխուել են Նոր Ջուղայի արեւմտեան կողմը եւ կազմել մի քանի թաղեր, որոնցից մի քանիսը յետագային դարձել են պարսկաբնակ. այսօր հայաբնակ են մնում միայն վերջին երկու թաղերը.—

Մեր նկարագրած տները գտնուում են թէ հին եւ թէ յետոյ կառուցուած թաղերի մէջ։ Այդ տներն են՝

1. Դաւթենց Տուն
2. Ջովելենց Տուն
3. Խոջա Ոսկանենց Տուն
4. Խոջա Պետրոսենց Տուն
5. Մանուկ Բարսեղենց Տուն
6. Նաղրենց Տուն
7. Ուլուխանենց Տուն
8. Ջանիխանենց Տուն
9. Սիմոնենց Տուն[8]
10. Սուքիասենց Տուն
11. Տէր Գրիգորենց Տուն
12. Տէր Եսայոնց Տուն

1. ԴԱՒԹԵՆՑ ՏՈՒՆ

Գտնուում է Դաւրէժ թաղում, որ մի նեղ փողոցով բաժանուում է Սուքիասենց Տունից։ Ինչպէս սովորաբար Նոր Ջուղայի բոլոր հին տները՝ սա եւս մի մեծ բակով բաժանուում է երկու մասի՝ հարաւային եւ հիւսիսային։

Գլխաւոր շէնքը գտնուում է հիւսիսային կողմում, որի կենտրոնում կայ մի մեծ սրահ, մէջտեղում մարմարեայ քարից մի աւազանով, որ ամրան ամիսներին սենեակը զով պահելու համար լցնում էին ջրով։ Հարաւային կողմում՝ սրահն ունի գունաւոր ապակիներով եւ դէպի վեր բացուող պատուհաններ[9], որոնք նայում են դէպի բակ։

Տան հարաւային մասումն էր գտնուում կանանոցը, ինչպէս եւ խոհանոցն ու մի քանի այլ սենեակներ։

Այս մասի սենեակներից մէկի պատերի վրայ կային իւղաներկ նկարներ, որոնցից մէկը Ֆաթալի Շահի լրիւ հասակով եւ երկար մօրուքով պատկերն էր։ Դաւթենց Տան նախքան 1973 թուին Փարդիս համալսարանին վաճառումը նրա պարսիկ տիրոջ կողմից՝ նկարները պատերից պոկուել ու վաճառուել են[10]։

Այս տունը նախապէս պատկանել է Լղուորեան տոհմին[11], որոնք եղել են յայտնի վաճառական եւ մեծատուն. յետոյ վաճառուել է Ամիրխանեաններին, եւ ապա՝ Ալիխանեաններին։ 1906ին վաճառուել է նոյն թաղի ծխատէր քահանայ Տէր Բարսեղ Ալեքսանեանին[12], որի յաջորդները վաճառել

Տէր Դաւթենց տուն, Ֆաթալի շահը

Տէր Դաւթենց տուն, պարուհի

Տէր Դաւթենց տուն

Տէր Դաւթենց տուն, Ֆաթալի շահը

են տունը մի պարսիկի, որի ժառանգորդները վաճառել են տունը 1973ին Փարդիս պետական համալսարանին։

Այս տան տիրոջ Աղա Մարգար Բաղդասարի Լղուորեանի մասին պատմում է մի աւանդութիւն։ Մարգարն իր երրորդ տղային ամուսնացնելու երրորդ օրը իր տունն է հրաւիրում Շահսուլթան Հոսէյնին։ Շահը որ ռուսու[13] մօտ աւազանի առջեւ նստած կլկլակ[14] է ծխում աւազանի ջրի մէջ տեսնում է տան երկրորդ յարկի պատշգամբում կանգնած նորահարսի պատկերը, եւ հարցնում Աղա Մարգարին.

— Եթէ ես մի բան ուզենամ քեզանից՝ կը տա՞ս ինձ։

— Շահն ապրած կենայ,— պատասխանում է Աղա Մարգարը.— եթէ գլուխս էլ ուզենաս՝ կը տամ քեզ։

Շահը նայում է աւազանի ջրի մէջ ուր դեռեւս երեւում է հարսի պատկերը եւ ասում.

— Դրա՛ն եմ ուզում։

Մարգարը գլխի ընկնելով՝ երկու ձեռքերով խփում է գլխին եւ լաց ու կոծ անում։ Իսկ Շահը հրամայում է ցած բերել հարսին. ապա հարսին նստեցնում են ձիու վրայ, Շահը ինքն էլ է նստում ձի եւ հարսը տանում են պալատ։

Այդ միջոցին հնչեցնում են եկեղեցու զանգերը որպէս սուգի նշան եւ ժողովուրդը մտնում է սուգի մէջ։

Շահը երեք օր պահելուց յետոյ հարսին՝ յանձնում է նրան իր սեւ ղո-

լամին[15]։

Աղա Մարգարի տղան սրտակտուր եղած՝ իր խնամիների հետ նախ գնում է Համադան Փերիայի վրայով, իսկ այնտեղից էլ գաղթում Հայաստան։

Այս առթիւ յօրինուել է մի երգ, որից մեզ հասել են հատ ու կենտ տողեր. ահա նրանք.

«Ռուսու գոլ–գոլ մեխերը,
«Քաշ–քաշ տարան տեղերը,
«Շահի սիրած Թանգ Խաթուն
«Դո՞ր սիրեցիր սեւ կատուն,

«Մարգարը մտաւ դուլարը,
«Վրէն չախ տուին գուլարը,
«Չի դաղարում դուլարում,
«Կիսամեռ դուս են բերում։

«Ռուսու հովզում լողացնում
«.....
«Շահում–չահում չախասը,
«Խոջա Մարգարենց հարսը»։

2. ԶՈՎԵԼԵՆՑ ՏՈՒՆ

Այս տունը գտնւում է Դաւրէժ թաղում, Սբ. Մինաս եկեղեցու դիմաց եւ փակուղու միւս կողմում։

Անցեալում պատկանել է Վեքիլ Դովլէ Ստեփանոս Աղանուրին, որի ժառանգորդները 1946ին վաճառել են նրան Զովել Զովելեանին։

Անցեալում շէնքն եղել է աւելի մեծ եւ ունեցել է առանձին բաժիններ եւ ախոռ, իսկ ներկայ շէնքը բաղկացած է փոքր բակով մի քանի սենեակներից. շէնքը երկյարկանի է բացի նրա հարաւային կողմից, ուր եւ գտնւում է գլխաւոր սենեակը։ Արեւմտեան կողմում կայ 7x9 մեթր չափերով խաչաձեւ մի սենեակ, որն ունի նկարազարդումներ։ Սենեակներն ունեն հին ձեւի փայտեայ դռներ ու պատուհաններ։ Արեւմտեան կողմի սենեակն ունեցել է նաեւ գունաւոր ապակիներով խաչազարդ ու գեղեցիկ երկու պատուհաններ, որոնցից միայն մէկը կայ այժմ։

Աղանուրեան Տոհմի մասին յիշատակուած է նաեւ Պատմութիւն Նոր Ջուղայի գրքում[16], ըստ որի՝ Աղանուրեանները եղել են Նոր Ջուղայի հին տոհմերից եւ յայտնի վաճառականներից։ Ստեփանոս Աղանուրի նկարը մի



Զովելենց տուն, որմնանկարներ

յախճապակու վրայ՝ այժմ ցուցադրւում է Վանքի թանգարանում, ինչպէս նաեւ իր սարդիոնեայ կնիքը[17]։

3. ԽՈՋԱ ՈՍԿԱՆԵՆՑ ՏՈՒՆ

Գտնուում էր Զարսու թաղում Ոսկանի անունը կրող փողոցի արեւելեան կողմում. ներկայիս դրա տեղ կառուցուած են նոր շէնքեր։ Ունեցել է երկու մաս՝ հարաւային եւ հիւսիսային։ Գլխաւոր շինութիւնը որը եղել է երկյարկ՝ գտնուել է հիւսիսային կողմում, իսկ միայարկ մի քանի սենեակները՝ հարաւային կողմում։

Նոր Ջուղայի հին տներից էր եւ կառուցուած ԺԷ. դարու հին ոճով։ Կենտրոնական սենեակի առաստաղը շատ բարձր էր եւ հաւասարում էր երկրորդ յարկի տանիքին. զարդանախշուած էր հին ձեւի դուներով եւ պատուհաններով։ Կողքերին ունէր փոքր, իսկ դրանց կողքին՝ աւելի մեծ սենեակներ։

Արտաքին պատերի կամարների վրայ ունէր մանր աղիւսներով շինուած գեղեցիկ զարդանախշեր, իսկ ներսում՝ զարդանկարներ։

Նոյն տան արեւելեան կողմից փողոցին նայող մի տան մէջ, որ թերեւս անցեալում պատկանել է նոյն տոհմից ոեւէ մէկին՝ կրակարանի վերեւում կար հետեւեալ արձանագրութիւնը.

«Ի ՎԱԵԼՈՒՄԸՆ ՈՍԿԱՆ/Ա·ԾԱՏՈՒՐ
«..թվն../ ԲԾ..[18]

Ներկայիս Ոսկան փողոցը կոչւում է Վրէժ Բաղումեանի անունով, որը նահատակուեց Իրան–Իրաք պատերազմին։

4. ԽՈՋԱ ՊԵՏՐՈՍ ՎԵԼԻՋԱՆԵԱՆԻ ՏՈՒՆ

Գտնուում է Մեծ Մէյտան թաղում՝ այժմու Հաքիմ Նեզամի պողոտայի արեւելեան եւ Սիմոնենց Տան[19] արեւմտեան կողմում։

Շէնքի մեծ մասը աւերուել է ու կառուցուել են նոր շէնքեր. ներկայիս մնում է միայն մէկ՝ գլխաւոր սրահը բակի հարաւային կողմում, եւ պատկանում է Իրանի Հնագիտական Շէնքերի Պահպանման Սպահանի Հիմնարկին։

Սոյն սենեակն ունի 10.5 մեթր երկարութիւն եւ 7.65 մեթր լայնք, որի մի մասը աւելի դուրս է ընկած։ Կենտրոնում է գտնուում գլխաւոր շէնքի գմբէթը, որ նկարազարդուած է. ունի նաեւ այլ նկարազարդումներ ու նկարներ, որոնցից մէկը մեծ պատի վրայ որսի մի տեսարան է կարմիր գոյներով, իսկ կողքի երկու կամարների նկարները կապտագոյն են՝ զանազան կենդանիների նկարներով։

Դրանց ներքեւում՝ չորս կողմում սենեակն ունի կարմիր եւ ոսկեգոյն



Խոջա Պետրոսենց տուն



Խոջա Պետրոսենց տուն

երիզարդեր, իսկ կենտրոնի երկու կողմերում՝ գաճաքանդակ զարդեր եւ սիւնանկարներ։ Դռնակների միջեւ եւս կան զանազան նկարներ։ Գլխաւոր յիշատակարանը գտնւում է կրակարանի[20] վերեւում՝ կապոյտ ֆոնի մէջ ոսկեգրերով գրուած։

Արձանագրութեան մէջ կը կարդանք.

«Յամս թագաւորութեան Շահ Սուլիմանին,
«Եւ ի հայրապետութեան Սբ. Էջմիածնայ Յակոբ Կաթողիկոսին,
«Ի թվին ՌՃԺ եւ է–նի ձեռամբն մեղաւոր Մաթէոսին,
«Որ է որդի Պարոն Մինասին, որ մանուկ տիօք հանգեաւ ի Քրիստոս,
«Որ էր ամաց Ի. եւ Ե. մաղթեմ զձեզ ով սիրելիք,
«Յորժամ տեսլեան սորա դիպիք,
«Յիշել զՄաթէոսն եւ զծընօղսն իւր եւ զպապն
Իւր Հեզահոգի եւ ողորմած խաճայ Պետրոսն,
Եւ ընդ իւր մերձաւորսն, զոր նորոգեաց
Զտունս ցանկալի, ի վայելումն որդւոց իւրոց
Պետրոս ջանին Տէրն տերանց եւ բերկրել ի
Յարազուարճ յաւիտենին, որ է օրհնեալ յաւիտեանս



Խոջա Պետրոսենց տուն

յաւիտենից, ամէն»[21]։

Սրանից բացի կան այլ արձանագրութիւններ եւս, որոնցից բերում ենք երկուսին.

«Թվին ՌՁ եւ Թ [1640] ծնունդն էր Մաթէոսին»։
«Թվին ՌՃ եւ Ը [1659] ծնունդն էր Պետրոսին»։

Ներկայիս այս սենեակը նորոգուած է Հնութեան Պահպանման եւ Մշակութային Հիմնարկի կողմից. գմբէթն եւս քանդուել եւ նորից է կառուցուել. վերակառուցւում են նաեւ մօտիկը գտնուող մի քանի սենեակները։

5. ՄԱՆՈՒԿ ԲԱՐՍԵՂԵՆՑ ՏՈՒՆ

Գտնւում է Դաւրէժ թաղում, Սբ. Մինաս եկեղեցու ձախ կողմում դէպի հարաւ բացւող մի փողոցի մէջ։

Կառուցուել է ԺԷ. դարում, իսկ յետոյ որոշ մասեր աւելացել են նրա վրայ Ղաջարիների շրջանում։ Ցայտնի է որպէս Մանուկ Բարսեղենց կամ Աղանուրենց Տուն։

Մի քանի տասնամեակ առաջ գնուել է Մինասեանների կողմից եւ բաժանուել մի քանի մասերի, որով եւ կորցրել է իր նախկին տեսքը։

Գլխաւոր շէնքը գտնւում է բակի հիւսիսային կողմում, եւ ունի գեղեցիկ փայտեայ սիւներով պատշգամբ։ Նոր Ջուղայի միւս հին տների նման ունի ռուսի եւ փայտեայ մանր փայտազարդ դռներ ու պատուհաններ, ինչպէս եւ զարդանկարներ ու զարդանախշեր։

Այս տան գլխաւոր զարդն ու արժէքը իր արեւմտեան կողմում գտնուող եւ Ղաջարիների շրջանին պատկանող թուով տասնմէկ նկարներն են՝ բոլորն էլ նկարուած դռնակների վերեւում եղող կամարաւոր կիսադռնակների մէջ։ Կենտրոնականը որ մեծագոյնն է՝ մի տեսարան է այգու մէջ, ուր մի սեղանի շուրջ նստած են մէկ տղամարդ, երեք կին եւ մէկ երեխայ։

Միւս տասը նկարներից մեծ նկարի երկու կողքերինը որպէս թէ նկարներն են Մեծն Պետրոսի եւ Իսրայէլ Օրու, իսկ միւսները պարսկական եւ եւրոպական տարազներով մարդկանց նկարներ եւ տեսարաններ են։ Առաջիններից են քեամանչա, սրինգ ու դափ նուագներ, եւ կին ու մարդու պատկերներ. հաւանաբար սրանց մէջ է նաեւ տան տիրոջ՝ Սուլթանի նկարը, որի տակ գրուած է «Քան. Ծոյ. Սուլթան»։

Սոյն նկարները տան տիրոջ կողմից պոկուել ու վաճառուել են 1970ական թուականներին, այնպէս որ դրանցից որեւէ հետք չի մնացել ներկայիս[22]։

Մանուկ Բարսեղենց տուն,
Իսրայէլ Օրի

Մանուկ Բարսեղենց տուն,
Խոջա Սուլթան

Մանուկ Բարսեղենց տուն,
Մեծն Պետրոս

Մանուկ Բարսեղենց տուն

6. ՆԱԳԻԵՆՑ ՏՈՒՆ

Գտնուում է Դաւրէժ թաղում՝ նոյնանուն պողոտայի հարաւային կողմում։ Ինչպէս սովորաբար հին շէնքերինն է՝ սա եւս դրան մուտքի մօտ ունի հաչտ եւ երկար միջանցք[23], որի վերջաւորութեան բացւում է բակի դուռը։

Շէնքն ունի մեծ բակ՝ այգիով եւ բաղկացած է երկու մասից՝ հարաւային եւ հիւսիսային։ Գլխաւոր կառոյցը հիւսիսային կողմումն է եւ բաղկացած է մի քանի սենեակներից։

Ինչպէս սովորաբար այլ շէնքերի պարագային է՝ այս շէնքն էլ արտաքին պատի ճակատին ունի մանրաղիւսով եւ զարդանախշերով զարդարանքներ։ Գլխաւոր սենեակն ունեցել է աւազան եւ ռուսի կոչուող հին ձեւի պատուհաններ, որոնք այժմ չկան. փոխուել են նաեւ այլ դռներ ու պատուհաններ ու նորացուել։

Շէնքն իր հարաւային կողմում եւս ունի մի քանի սենեակներ, որոնք եւս ենթարկուել են որոշ նորոգումների։

Շէնքն այժմ պատկանում է Նագրեան ընտանիքին, որ բնակւում է նրա մէջ։

7. ՈՒԼՈՒԽԱՆԵՆՑ ՏՈՒՆ



Ուլուխանենց տուն

Գտնւում է Երեւան թաղում՝ ներկայի Խաղանի պողոտայի վերջաւորութեան աջ կողմում։ Ունէր Զհելսութունի նման փայտեայ գեղեցիկ զարդաքանդակներով սիւներ, ինչպէս եւ հին ձեւի դռներ եւ պատուհաններ։ Ներկայիս չկայ այս տունը։ քանդուել է 1970ին։ Մինչ այդ, սակայն, քանիցս այցելել էի այդտեղ 1964 թուից սկսեալ եւ վերցրել մի սենեակում եղած պատի գաչին գրուած արձանագրութիւնները, որոնք յետոյ, տան տիրոջ Աբբաս Բազէրի նուիրատուութեամբ, պոկեցինք պատերից եւ փոխադրեցինք Սբ. Ամենափրկիչ Վանքի թանգարանը, եւ առինք շրջանակի մէջ։ Ցուցադրուած արձանագրութիւնները կրում են 432—434 համարները։

Ահաւասիկ նրանք[24]։



Ուլուխանենց տուն

«Հայոց Մեծի թուականին ԴՃԺ հնգին [1666],
«Ի վայելումն բարեպաշտին,
«Անւամբ Պարոն Ուլուխանին,
«Այս յապարանս ծաղկեցին։
«Գոյնզգոյնօք զարդարեցին,
«Զրեհ սոքա վայելեցին,
«Եղբայր Պարոն Ուլուխանին
«Հայպաթ անուամբ խոնարհոգին,

«Նորաբողբոջ որդին սորին
«Մանուկ տիօք Անդրիասին,
«Աջոյն Տեառն սոքա օրհնին,
«Յերկար կենաւք վայելեսցին,
«Եւ ի պարսից թագաւորին,
«Անուամբ փոքրիկ Շահ Ապասին,
«Ազգիս հայոց օգնականին։
«Պահապան լիցի ամեն երկնային»։

8. ՉԱՆԻԽԱՆԵՆՑ ՏՈՒՆ



Չանիխանենց տուն



Ջանիխանենց տուն

Գտնւում է Մեծ Մէյտան թաղում, այժմեան Հաքիմ Նեզամի պողոտայի վրայ՝ Խաղանի քառուղու հարաւ–արեւելեան անկիւնում։

Անցեալում պատկանել է Խոջա Փանոսին, իսկ այս տան վերջին հայ տէրերն եղել են Ջանիխան Պետրոսեանները, որոնք եւս 1973ին վաճառել են կառավարութեան, որ նորոգել եւ դարձրել է Փարդիս համալսարանի կենտրոնական գրասենեակը։

Երբ կառավարական որոշումով գնուեց այդ շէնքը՝ Բոնիաթ Փահլաւի Հիմնարկի կողմից՝ որոշուել էր դրան դարձնել ազգագրական թանգարան, որի մի սրահն էլ պէտք է յատկացուէր Նոր Ջուղային[25], բայց յետոյ երբ ծագեց յեղափոխութիւնը՝ փոխուեց այդ ծրագիրը։

Շէնքը բաղկացած է հարաւային եւ հիւսիսային գլխաւոր երկու մասերից. մի քանի սենեակներ ունի նաեւ հարաւային կողմում։ Հիւսիսային շէնքի մի մասը քանդուել է Խաղանի պողոտայի լայնացման պատճառներով։

Շէնքն ունի կենտրոնական սրահ, որի մէջ անցեալում կար քարաշէն աւազան, վերեւում՝ պատշգամբ, եւ նաեւ գաչազարդ դռնակներ՝ Ալի Ղափու պալատի նման, նախշազարդեր ու ծաղկանկարներ. նոյներից կան մօտի կից սենեակներում եւս։

Վերջին տարիներին մեծ նորոգութիւն է կատարուել շէնքի հարաւային եւ հիւսիսային մասերում. աշխատանք է տարուել նոյնութեամբ վերակառուցել քանդուած մասերը եւ նոյնութեամբ վերանորոգել պատուհանների փայտեայ մանրացանցերը։ Ըստ նախկինի՝ շէնքը ամբողջութեամբ ծեփուել է կարմիր շաղախով։

Մեծ աշխատանք է տարուել նաեւ բակի վրայ, որը սալարկուել է քարով եւ վերածուել գեղեցիկ պարտէզի։

9. ՍԻՄՈՆԵՆՑ ՏՈՒՆ

Գտնւում է Մեծ Մէյտան թաղում՝ Վանքի պողոտայի վրայ եւ Վանքի հիւսիս–արեւմտեան կողմում։

Կառուցուել է հաւանաբար ԺԷ. դարում, բայց հիմնապէս նորոգուել է 1892 թուին։

Շէնքը պատկանել է Նոր Ջուղայի յայտնի դէմքերից Քալանթարենց Հայրապետին, ապա անցել է իր ժառանգին՝ Պարոն Սիմոնին, եւ այդ պատճառով էլ յայտնի է Սիմոնենց Տուն անունով։

Միաժամանակ Սիմոնն եղել է Փերիոյ գաւառի արքայական շուրջ երեսուն հայ եւ պարսիկ գիւղերի կառավարիչը[26], բայց 1824 թուին սպանուել է յայտնի բռնակալ Հաճի Հաչեմխանի կողմից. թաղուել է Սբ. Բեթղեհէմ եկեղեցու գաւիթում[27]։

1843ին տունը գնուել է Նոր Ջուղայի առաջնորդ Յովհաննէս Սուրէ-

նեանի կողմից, ուր եւ նա բացել է հոգեւոր դպրոց՝ կարճ ժամանակուայ համար։ Վերանորոգուել է 1892 թուին եւ կրկին կարճ ժամանակով դարձել դպրոց։ Վերանորոգման առթիւ վերնայարկի պատի վրայ մարմար քարին գրուած է մի յիշատակարան, ըստ որի «Վանքապատկան տունս այս ՍԻՄԷՕՆԵԱՆՑ կոչեցեալ վերանորոգեցաւ յաւերակաց իւրոց փութաջանութեամբ եւ իւր իսկ ճարտարապետութեամբ Տեառն Եսայեայ Եպիսկ. Տփխիսեցւոյ 22րդ առաջնորդի Ամենափրկչեան Սր. Վանաց Նոր Ջուղայու յամի Տեառն 1892»։

Շէնքը բաղկացած է հիւսիսային եւ հարաւային երկու մասերից։ Գլխաւոր շէնքը հիւսիսային կողմում է, եւ ունէր նկարազարդ սենեակներ, որից ներկայիս մնացել է միայն մէկը։ Հարաւային շէնքը երկյարկանի է, որի դռներն ու պատուհաններն եւս փոխուել են։ 1911—1933 շէնքը ծառայել է որպէս հիւանդանոց, իսկ յետոյ դարձել ակումբ։ Ներկայիս այնտեղ բնակւում են մի քանի չքաւոր ընտանիքներ։ Անցեալում շէնքն ունեցել է ախոռ, որ 1950 թուին քանդուել եւ տեղում կառուցուել է մի սրահ։

10. ՍՈՒՔԻԱՍԵՆՑ ՏՈՒՆ

Գտնւում է Դաւրէժ թաղում, Սբ. Մինաս եկեղեցուց դէպի հարաւարեւմուտք՝ փողոցի հարաւային կողմում։

Ինչպէս Նոր Ջուղայի հին տները՝ սա եւս բաղկացած է երկու՝ հարաւային եւ հիւսիսային մասերից։ Շէնքի գլխաւոր շինութիւնը գտնւում է հարաւային կողմում՝ հակառակ Նոր Ջուղայի ընդհանրապէս մեծ թիւով միւս տներին։ Ունի կենտրոնական սրահ, կենտրոնում մի աւազան, առջեւում մի պատշգամբ, եւ երկու կողքերին վերնայարկերով սենեակներ։

Պատշգամբի պատերն ունեն նկարներ, որոնք ցոյց են տալիս տարուայ չորս եղանակները. կան մի շարք այլ նկարներ եւս։ Պատշգամբի առաստաղը փայտածածկ է եւ զարդարուած՝ փայտաշէն նախշերով եւ զարդերով։ Պատշգամբն ունի ութանկիւն ձեւով երկու սիւն, որոնց վերին մասերը քանդակազարդ են։ Պատշգամբի բարձրութիւնը հասնում է երկրորդ յարկի տանիքին։

Սուքիասենց Տունն ունի Ալի Ղափու պալատի նման գաչազարդ դրռնակներ, վանդակորմեր եւ մանրափայտ զարդերով պատուհաններ։

Ներկայիս շէնքը պատկանում է Փարդիս համալսարանին, եւ յատկացուած է նկարչութեան եւ գեղարուեստի ճիւղերի բաժիններին[28]։

11. ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵՆՑ ՏՈՒՆ

Գտնւում է Փոքր Մէյտան[29] թաղում՝ նոյն անունը կրող փողոցի մէջ։ Կառուցուել է ԺԷ. դարում եւ յայտնի է Տէր Գրիգորենց Տուն անունով։

Այժմ պատկանում է Աւօ Տէր Մարտիրոսեանին, որ 1960 թուին գնել է Աբամ Ասլանեանից։

Շէնքը որ Նոր Ջուղայի կամարաւոր հին տներից է՝ գտնւում է բակի հարաւային կողմում. որոշ սենեակներ երկյարկանի են եւ ունեն զարդանախշեր, եւ հին ձեւի փայտեայ մանրակտորներով պատուհաններ, որոնցից ոմանք փոխուել են եւ նորացել։

Սենեակներից մէկի գրեթէ բոլոր դռնակներում կան գաչազարդերով չիշատեղեր եւ զարդաձեւեր՝ ինչպէս որ ունի Ալի Ղափու պալատը։ Սրանք իբր թէ նուագի ձայնի արձագանգը զօրացնելու համար են։ Արտաքին պատի ճակատների վրայ կան նաեւ մանրաղիւս զարդաձեւերով կամարներ։

Անցեալում եղել է շատ մեծ, եւ բաժանուել է մի քանի մասերի։

12. ՏԷՐ ԵՍԱՅՈՆՑ ՏՈՒՆ

Գտնուել է Մեծ Մէյտան թաղում, ներկայի Շաղանի պողոտայի վրայ, բայց աւերուել է ամբողջովին Հաքիմ Նեզամիի պողոտայի բացման ժամանակ։

Գլխաւոր շէնքը գտնուել է բակի հիւսիսային կողմում եւ ունեցել է գեղազարդ կամարաւոր սենեակներ՝ մի կենտրոնական գմբէթաւոր սրա-

Տէր Եսայոնց տուն



Տէր եսայոնց տուն

հով եւ հին ձեւի փայտեայ դուռ ու պատուհաններով։

Հետաքրքիր է այստեղ յիշել, որ դրա դրկից տան դռան մօտ գտնուող նստատեղերում կային անգլերէն արձանագրութիւն կրող երկու քարեր, որոնց մի մասը լինելով պատի մէջ՝ լրիւ չէին կարդացւում։ Երբ շէնքը աւերուեց պողոտայի բացման պատճառով՝ պարզուեց որ քարերը յիշատակագրուել են մի յանձնախումբի կողմից, որ 1874 թուին Սպահան էր եկել Վենուս[30] մոլորակի ուսումնասիրութեան համար, ապրել էր Սպահանի Բաղր Ջերեչկ կոչուած այգում, եւ քանդակել այս քարերը որպէս յիշատակ։ Քարերի վրայ գրուել էր.

"DEUTSCHE VENUS EXPEDITION 1874".

Ներկայիս այս քարերը գտնւում են Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ Վանքում եւ ցուցադրուած են թանգարանի մուտքի մօտ։

Ինչպէս ասուեց սկզբում՝ Նոր Ջուղայում եղել են մեծ թուով շատ գեղեցիկ եւ պալատանման տներ, որոնց մեծ մասը աւերուել է, բայց դեռ կան ոմանք, որոնց մասին հնարաւոր չեղաւ խօսել այստեղ։ Ցուսալի է, որ պետական պատկան հիմնարկութիւնների շնորհիւ հնարաւոր լինի աւերումից փրկել գոնէ մնացածները։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Յարութիւն Տէր Յովհաննեան, ***Պատմութիւն Նոր Ջուղայի***, հտ. Ա., Նոր Ջուղա, 1880–1881, էջ 46։ Տես նաեւ՝ Լ.Գ. Մինասեան, ***Նոր Ջուղայի Թանգարանը***, Նոր Ջուղա, 1968, էջ 32, Լ.Գ. Մինասեան, ***Դիւան Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի***, Նոր Ջուղա, 1968, էջ 107 եւ ***Հուր*** ամսագիր, թիւ 3–4, Թեհրան, 1971, էջ 63։
2. Ներկայի Սբ. Սարգիս եկեղեցին։
3. Յարութիւն Տէր Յովհաննեան, ***Պատմութիւն Նոր Ջուղայի***, հտ. Բ., Նոր Ջուղա, 1880–1881, էջ 223։ Այսուհետեւ՝ Տէր Յովհաննեան։
4. John Carswel, ***New Julfa,*** Oxford, 1968.
5. K. Karapetian, ***Isfahan-New Julfa,*** Roma, 1974.
6. Պարսկերէնով՝ Սանգքրշաշա կամ Քոչեր։
7. Կամ՝ Մահլաբ։
8. Կամ՝ Հայ Ակումբ։
9. Այսինքն՝ ռուսիներ։
10. Այս տան մասին տես նաեւ ***Արփի*** ամսագիր, Թեհրան, 1949, էջ 37–45։
11. Լոռորեանների մասին տես՝ Տէր Յովհաննեան, հտ. Ա., էջ 199։
12. Ծանօթ նաեւ Դաւթեան անունով։
13. Պատուհան։
14. Ղէյլիան, Ղալիան։
15. Ծառային։
16. Տես՝ Տէր Յովհաննեան, հտ. Ա., էջ 150–151։

17. Թանգարանի մատեանում յաջորդաբար արձանագրուած են 240 եւ 539 համարներով:
18. Եթէ տառաթուերի կողքերին չի եղել այլ տառ՝ ուրեմն դա Ազարեանի թուարկութեամբ է, եւ կը լինի 200+1615=1815:
19. Կամ՝ Հայ Ակումբի:
20. Այսինքն՝ բուխարու:
21. Սոյն արձանագրութիւնը տպիս են նաեւ Ա. Երեմեանը, Յ. Քիւրտեանը եւ Կ. Կարապետեանը, որի համար յաջորդաբար տես՝ ***Ընահիպ*** Ամսագիր, Փարիզ, Սեպտեմբեր–Հոկտեմբեր, 1938, էջ 45, ***Հայրենիք*** Ամսագիր, Պոսթոն, Յունուար, 1940, էջ 120, եւ Karapetian, pp. 65 and 71. այս վերջինը ունի սխալներ:
22. Մանուկ Բարսեղեանց Տան մասին տես նաեւ՝ Carswel, p. 68, Karapetian, p. 341, եւ Մանիա Ղազարեան, ***Հայ Կերպարուեստը ԺԷ.–ԺԸ. Դարերում***, Երեւան, 1974, էջ 41–44:
23. Դալան:
24. Արձանագրութիւնը որի համաոստագրութիւնները բացուել են այստեղ՝ գրուած էր սենեակի չորս կողմի պատերին վրայ:
25. Որի կառավարման յանձնախումբի անդամ նշանակուած էի ես էլ:
26. Պարսկերէն՝ զաբէթ:
27. Այս մասին տես՝ Թադէոս Աւետումեան, ***Արամայիս***, Կալկաթա, 1846, էջ 103–104, եւ Տէր Յովհաննեան, հտ. Ա., էջ 414–425 եւ հտ. Բ., էջ 79:
28. Այս մասին տես՝ Carswel, pp. 65-67 եւ 70-77:
29. Կամ՝ Շիրախանի փողոց:
30. Արուսեակ:

Լ.Գ.Մ.

A SHORT SURVEY ON THE ANCIENT MANSIONS OF NEW JULFA

(Summary)

L.G. MINASSIAN

Though John Carswel and Karapet Karapetian have presented some of the ancient mansions of New Julfa in there respective works on the architecture, painting, art and decoration, and history there of, the author of the article given here tries to present twelve of them, namely the princely mansions of Davitentz, Hovelentz, Khoja Voskanentz, Khoja Petrosentz, Manouk Barseghentz, Naderentz, Ouloukhanentz, Djanikhanentz, Simonentz, Soukiasentz, Ter Grigorentz and Ter Yesayontz. Yet he does not intend to give a meticulous study and presentation of each mansion discussed here; just the opposite, relying on his personal observations and his own notes taken at his different visits to each of these mansions, Minasian presents a general report on each of them, which once belonged to an Armenian aristocratic family or a princely house, khoja, or great merchant. In time, we are informed, these mansions changed hands till some of them went victim to road constructions, others were bought by the Iranian state to make part and parcel of Phardis University, while others were taken over by the Institute of Antiquities of Isfahan; on the other hand, one of these mansions was bought by the St. All-Saviour Convent and was changed to a ceminary, another is now the Armenian Club of Isfahan, while two are inhabitted by their present owners and some poor people.

The article does not purport to give an artistic, esthetic and architectural evaluation and analysis of all the twelve mansions presented here, though at times, the author does not abstain of giving a vivid description of wall paintings wood-carvings and sundry decorations, door and window panels, architectural forms and style, and constructional effects; moreover, he presents the various mural inscriptions, dates and information found in different mansions. It is clear that Minasian definitely makes certain additions on what the scanty sources have and tries to save them from doubtless oblivion, because, in fact, some of these mansions exist no more. As the author states, "there have been a great number of these very beautiful and palatial mansions at New Julfa the majority of which have been destroyed. Yet there exist some, of which we could not talk. Let us hope that through the care of respective state institutions it will be possible to save the rest from destruction."